Աշոտ Մելքոնյան, պ.գ.դ., ակադեմիկոս

Ծնվել է 16.02.1961թ., ք. Ախալաքալաք
E-mail: patminst@sci.am

Կրթություն

1977-1982 - ԵՊՀ, պատմության ֆակուլտետ, գերազանցության դիպլոմ
1982-1989 - ԵՊՀ, Հայոց պատմության ամբիոն, ասպիրանտ, թեկնածուական ատենախոսություն՝ *«Արևմտյան Հայաստանի Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը 19-րդ դարի առաջին երեսնամյակին»* (պաշտպանվել է 1989թ.)
Դոկտորական ատենախոսության թեմա՝ *«Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին»* (պաշտպանվել է 2002թ.)

Աշխատանքային փորձ

2002- առ այսօր - ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն
1986-2002թթ. - ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի լաբորանտ, գիտաշխատող, գիտքարտուղար և գիտական հարցերի գծով փոխտնօրեն

Գիտական հետաքրքրությունների շրջանակ

Արևմտյան Հայաստանի, Հայկական հարցի, Հայոց ցեղասպանության, Ջավախքի պատ-մության, ժողովրդագրության հիմնահարցեր

Լեզուների իմացություն

Հայերեն, ռուսերեն, վրացերեն, գերմաներեն, անգլերեն

Պարգևատրումներ

Պարգևատրվել է «Մովսես Խորենացի», «Գարեգին Նժդեհ», «Անդրանիկ Օզանյան», «Ֆրիտյոֆ Նանսեն» և տարբեր համալսարանների ոսկե մեդալներով:

Համակարգչային իմացություններ

MS Office word

Այլ

Ավելի քան 350 գիտական հոդվածների հեղինակ է: «Էրզրում» մենագրությունը (Ե., 1994 թ.) և մոտ 30 հոդվածներ արժանացել են «Հայաստան» համահայկական հիմնադրամի, իսկ «Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին» աշխատությունը (Ե., 2003 թ.)՝ Թեքեյան մշակութային միության մրցանակին: Մելքոնյանի աշխատությունները լույս են տեսել ավելի քան 10 լեզուներով: Շուրջ 20 երկրներում մասնակցել է բազմաթիվ միջազգային գիտաժողովների:

Բազմիցս ուխտագնացության է մեկնել Արևմտյան Հայաստան: Հեղինակ է «Կարոտի էրգիր», «Արարատ. Հայոց անմահության խորհուրդը» և այլ ֆիլմերի: 2007 թ. օգոստոսի 10-ին բարձրացել է Արարատի գագաթը: 2009 թ. դարձել է Ախալքալաքի պատվավոր քաղաքացի:

2004 թ. ստացել է պրոֆեսորի գիտական կոչում: 2006 թ. դեկտեմբերի 15-ին ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 2014 թ. դեկտեմբերի 27-ին՝ ակադեմիկոս: